Արձանագրություն N 2
Протокол N 2

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/214» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի
Внеочередное заседание оценочной комиссии под кодом «EQ-GHASHDZB-23/214»

ք. Երևան
г. Ереван

17.07.2023թ.
Ժամը 15:00
17.07.2023г.
15:00ч.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Հարությունյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Սարգսյանը, Հ. Մելքումյանը, Կ. Հակոբյանը, Ե. Ռամազյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը
Участвовали
Председатель комиссии В. Арутюнян
Члены комисии: А. Саргсян, А. Мелкумян, К. Акопян, Е. Рамазян
Секретарь комисии: Г. Мурадян

1. **«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/214» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 14.07.2023 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ**
Ответ на разъяснение по запросу поданного 14.07.2023 в рамках закупочной процедуры под кодом «EQ-GHASHDZB-23/214»

(Վ. Հարությունյան В. Арутюнян)

1.Պարզաբանման պահանջի տեքստ
Текст запроса для разъяснения

. արդյո՞ք **«բարձր լուսայինին տենսիվություն ունեցող լույսանդրադարձնող Б դասի միկրոպրիզմատիկ փայլաթերթի»** փոխարեն ընդունելի է «բարձր լուսային ինտենսիվություն ունեցող լույսանդրադարձնող B դասի միկրոպրիզմատիկ փայլաթերթ», ինչը համարվում է ավելի բարձր դասի փայլաթերթ

2. Բնութագրում նշված է, որ **«Լույս անդրադարձնող փայլաթերթի համար արտադրողը պետք է տրամադրի <u>երաշխիքային հավաստագիր</u>՝ 10 տարի, աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C- +80°C/, վերոնշյալ տեխնիկական բնութագրին <u>համապատասխան վկայագրի առկայություն</u>»**

ա. Արտադրողը անձա՞մբ/ուղիղ ձե՞զ պետք է տրամադրի, թե՞ հնարավոր է նաև փոխանցում այլ միջնորդների միջոցով, օրինակ տվյալ մրցույթի հաղթողի կամ նրա ներկայացուցչի կամ այլ երրորդ անձի միջոցով

բ. դուք հիմա պահանջում եք երաշխիքային հավաստագի՞ր, թե՞ համապատասխան վկայագիր

գ. **երաշխիքային հավաստագիր՝ 10 տարի**. ի՞նչ է նշանակում, արդյոք հավաստագիրը պետք է տրամադրվի 10 տարի անընդմեջ՝ ամեն տարի կամ ամեն ամիս, թե խոսքը վերաբերում է փայլաթերթի որակական հատկանիշներին, դիմացկունությանը

դ. եթե խոսքը վերաբերում է դիմացկունությանը, արդյոք B տիպի 12 տարի դիմացկունությամբ փայլաթերթ օգտագործելու դեպքում բավարար է երաշխիքային հավաստագիր կամ համապատասխան վկայագիր՝ 10 տարի, թե անհրաժեշտ է երաշխիքային հավաստագիր կամ համապատասխան վկայագիր՝ 12 տարի:
ե. Եթե փայլաթերթն ունի 10 տարի դիմացկունության պահանջ, արդյո՞ք ենթադրվում է որ տվյալ մրցույթի պայմանագրի կատարման երաշխիքը՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, ևս 10 տարի է:
զ. եթե այո, ապա խնդրում եմ պարզաբանել, մասնակցի կողմից 20 տարի դիմացկունությամբ փայլաթերթ առաջարկելու դեպքում, արդյոք պահանջվելու է 20 տարի ժամկետով պայմանագրի կատարման երաշխիքը՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:
3. Բնութագրում նշված է. **«Առաջադրանքով նախատեսված ճանապարհային նշանի պատրաստման և տեղադրման առավելագույն քանակը 1 օրացուցային օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 20 հատ, ճանապարհային նշանի (շիթ) պատրաստման և տեղադրման առավելագույն քանակը 1 օրացուցային օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 2 քմ, ճանապարհային նշանի կանգնակի պատրաստման և տեղադրման առավելագույն քանակը 1 օրացուցային օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 10 հատ, 6մմ-ոց ճոպանի մոնտաժման առավելագույն քանակը 1 օրացուցային օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 2 հատ, սֆերիկ հայելու պատրաստման և տեղադրման առավելագույն քանակը 5 օրացուցային օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 1 հատ»:**
Խնդրում եմ պարզաբանել, արդյոք նույն օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 20 ճանապարհային նշանի պատրաստման և տեղադրման+մինչև 2քմ ճանապարհային նշանի (շիթ) պատրաստման և տեղադրման+մինչև 10 հատ ճանապարհային նշանի կանգնակի պատրաստման և տեղադրման+մինչև 2 հատ 6մմ-ոց ճոպանի մոնտաժման աշխատանք միաժամանակ, թե վերոնշյալը հասկանալ կամ/կամ սկզբունքով:
4. Բնութագրում նշված է. **«Տեղադրվում են պատվիրատուի կողմից գրավոր կամ բանավոր առաջադրանքը ստանալու օրվան հաջորդող օրվանից հաշված 2 օրացուցային օրվա ընթացքում՝ այդ առաջադրանքում նշված վայրերում և քանակներով»:**
Խնդրում եմ պարզաբանել, թե ինչ բանավոր ուղիներով է առաջադրանքը ուղարկվելու պատվիրատուի կողմից և այնուհետև ինչպես է վերահսկվելու բանավոր առաջադրանքի և կատարված աշխատանքի համընկնումը:
5. Բնութագրում նշված է. **«2 մ բարձրությունից ծածկի մակերեսի վրա 25մմ տրամագծով պողպատե գնդակի հարվածից հետո անդրադարձիչ ծածկի վրա չպետք է առկա լինի որևէ ճաք կամ արտացոլանքի նվազում»:**
Խնդրում եմ պարզաբանել 25մմ տրամագծով պողպատե գնդակի խտությունը և հարվածի արագությունը:
6. Բնութագրում նշված է. **Անդրադարձիչ նյութը պետք է դիմակայուն լինի եղանակային բոլոր պայմաններում:**
Արդյոք անդրադարձիչ նյութը պետք է դիմակայուն լինի այնպիսի եղանակային պայմաններում ինչպիսիք են ջրային պտտահողմը, սառցե անձրևը, տորնադոն, հրե պտտահողմը, բուքը, հրաբուքը կամ փոթորիկը: Խնդրում եմ պարզաբանել:

Ինչպես նաև gnumner.am կայքում մրցույթի ծածկագիրը ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/214 է, իսկ հրավերում ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/124: Խնդրում եմ շտկել:

Պարզաբանում տրամադրելու տեքստ.
Текст разъяснения

արդյո՞ք **«բարձր լուսայինին տենսիվություն ունեցող լույսանդրադարձնող Б դասի միկրոպրիզմատիկ փայլաթերթի»** փոխարեն ընդունելի է «բարձր լուսային ինտենսիվություն ունեցող լույսանդրադարձնող B դասի միկրոպրիզմատիկ փայլաթերթ», ինչը համարվում է ավելի բարձր դասի փայլաթերթ

Միկրոպրիզմային փայլաթիթեղի վերաբերյալ պահանջները հստակ նշված է հրավերում, ավելի բարձր դասի փայլաթիթեղի ընդունելու գիտմամբ անհրաժեշտ կլինի հավաստագրի, որ կապացուցի նշված փաստը:

2. Բնութագրում նշված է, որ **«Լույս անդրադարձնող փայլաթերթի համար արտադրողը պետք է տրամադրի <u>երաշխիքային հավաստագիր</u>՝ 10 տարի, աշխատանքային ջերմաստիճանը՝ -40°C- +80°C/, վերոնշյալ տեխնիկական բնութագրին <u>համապատասխան վկայագրի</u> առկայություն»**

ա. Արտադրողը անձա՞մբ/ուղիղ ձե՞զ պետք է տրամադրի, թե՞ հնարավոր է նաև փոխանցում այլ միջնորդների միջոցով, օրինակ տվյալ մրցույթի հաղթողի կամ նրա ներկայացուցչի կամ այլ երրորդ անձի միջոցով

Համաձայն հրավերով նշված պահանջի, մասնակիցը պետք է տրամադրի:

բ. դուք հիմա պահանջում եք երաշխիքային հավաստագի՞ր, թե՞ համապատասխան վկայագիր

Համաձայն հրավերով նշված պահանջի պետք է տրամադրվի՝ երաշխիքային հավաստագիր և համապատասխան վկայագիր:

գ. **երաշխիքային հավաստագիր՝ 10 տարի**. ի՞նչ է նշանակում, արդյոք հավաստագիրը պետք է տրամադրվի 10 տարի անընդմեջ՝ ամեն տարի կամ ամեն ամիս, թե խոսքը վերաբերում է փայլաթերթի որակական հատկանիշներին, դիմացկունությանը

Երաշխիքային հավաստագիրը դա արտադրողի կողմից գործարանային երաշխիքն է, որը նախատեսված է 10 տարվա համար:

դ. եթե խոսքը վերաբերում է դիմացկունությանը, արդյոք B տիպի 12 տարի դիմացկունությամբ փայլաթերթ օգտագործելու դեպքում բավարար է երաշխիքային հավաստագիր կամ համապատասխան վկայագիր՝ 10 տարի, թե անհրաժեշտ է երաշխիքային հավաստագիր կամ համապատասխան վկայագիր ՝ 12 տարի:

Հրավերում հստակ նշված է երաշխիքային հավաստագիր 10 տարի:

ե. Եթե փայլաթերթն ունի 10 տարի դիմացկունության պահանջ, արդյո՞ք ենթադրվում է որ տվյալ մրցույթի պայմանագրի կատարման երաշխիքը՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, ևս 10 տարի է:

Հրավերում հստակ նշված է, որ փայլաթերթի համար արտադրողը պետք է տրամադրի 10 տարի երաշխիքային հավաստագիր, որը պայմանագրի երաշխիքի հետ չի ասոցացվում:

զ. եթե այո, ապա խնդրում եմ պարզաբանել, մասնակցի կողմից 20 տարի դիմացկունությամբ փայլաթերթ առաջարկելու դեպքում, արդյոք պահանջվելու է 20 տարի ժամկետով պայմանագրի կատարման երաշխիքը՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

ե ենթակետով հարցին պատասխանվել է:

3. Բնութագրում նշված է. **«Առաջադրանքով նախատեսված ճանապարհային նշանի պատրաստման և տեղադրման առավելագույն քանակը 1 օրացուցային օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 20 հատ, ճանապարհային նշանի (շիթ) պատրաստման և տեղադրման առավելագույն քանակը 1 օրացուցային օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 2 քմ, ճանապարհային նշանի կանգնակի պատրաստման և տեղադրման առավելագույն քանակը 1 օրացուցային օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 10 հատ, 6մմ-ոց ճոպանի մոնտաժման առավելագույն քանակը 1 օրացուցային օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 2 հատ, սֆերիկ հայելու պատրաստման և տեղադրման առավելագույն քանակը 5 օրացուցային օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 1 հատ»:**

Խնդրում եմ պարզաբանել, արդյոք նույն օրվա կտրվածքով կարող է լինել մինչև 20 ճանապարհային նշանի պատրաստման և տեղադրման+մինչև 2քմ ճանապարհային նշանի (շիթ) պատրաստման և տեղադրման+մինչև 10 հատ ճանապարհային նշանի կանգնակի պատրաստման և տեղադրման+մինչև 2 հատ 6մմ-ոց ճոպանի մոնտաժման աշխատանք միաժամանակ, թե վերոնշյալը հասկանալ կամ/կամ սկզբունքով:

Հրավերով հստակ նշված է 1 օրվա ընթացքում պատվիրատուի առավելագուն ծավալը, որը պետք է կատարվի:

4. Բնութագրում նշված է. **«Տեղադրվում են պատվիրատուի կողմից գրավոր կամ բանավոր առաջադրանքը ստանալու օրվան հաջորդող օրվանից հաշված 2 օրացուցային օրվա ընթացքում՝ այդ առաջադրանքում նշված վայրերում և քանակներով»:**

Խնդրում եմ պարզաբանել, թե ինչ բանավոր ուղիներով է առաջադրանքը ուղարկվելու պատվիրատուի կողմից և այնուհետև ինչպես է վերահսկվելու բանավոր առաջադրանքի և կատարված աշխատանքի համընկնումը:
Գրավոր ներկայացվելու է պատվերը, իսկ բանավոր՝ պատվերի կատարմանը բերաբերող այլ աշխատանքային առաջադրանքներ:
5. Բնութագրում նշված է. **«2 մ բարձրությունից ծածկի մակերեսի վրա 25մմ տրամագծով պողպատե գնդակի հարվածից հետո անդրադարձիչ ծածկի վրա չպետք է առկա լինի որևէ ճաք կամ արտացոլանքի նվազում»:**
Խնդրում եմ պարզաբանել 25մմ տրամագծով պողպատե գնդակի խտությունը և հարվածի արագությունը:
Պողպատի խտության մասին տեղեկությունը առկա է դպրոցական դասագրքերում և այն հայտնի է, իսկ հարվածի արագությունը՝ առնվազն 3մ/վ:
6. Բնութագրում նշված է. **Անդրադարձիչ նյութը պետք է դիմակայուն լինի եղանակային բոլոր պայմաններում:**
Արդյոք անդրադարձիչ նյութը պետք է դիմակայուն լինի այնպիսի եղանակային պայմաններում ինչպիսիք են ջրային պտտահողմը, սառցե անձրևը, տորնադոն, հրե պտտահողմը, բուքը, հրաբուքը կամ փոթորիկը: Խնդրում եմ պարզաբանել:
Հրավերում հստակ նշված է՝ բոլոր եղանակային պայմաններում:

Ինչպես նաև gnumner.am կայքում մրցույթի ծածկագիրը ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/214 է, իսկ հրավերում ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/124: Խնդրում եմ շտկել:
Որպես գնման ընթացակարգի ծածկագիր հիմք ընդունել ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/214 ծածկագիրը, «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/124» ծածկագիրը վրիպակի արդյունքում նշվել է մեկ տեղ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:
Принято решение: за - 5, против - 0.

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.
Имена и фамилии членов комиссии, присутствующих на заседании.

Հանձնաժողովի Նախագահ՝ Председатель Комиссии		Վ. Հարությունյան В. Арутюнян
Անդամներ՝ Члены		Հ. Սարգսյան А. Саргсян
		Հ. Մելքումյան А. Мелкумян
		Կ. Հակոբյան К. Акопян
		Ե. Ռամազյան Е. Рамазян
Քարտուղար՝ Секретарь		Գ. Մուրադյան Г. Мурадян